

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱԿԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016թվականի հունվարի 17-ին, ժամը 14:00-ին Մրգաստանի համայնքապետարանում տեղի ունեցավ Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Խաչատրյանի 2016թվականի տարեկան հաշվետվությունը:

Ներկա էին՝ համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ, հյուրեր, ինչպես նաև մարզապետարանի ներկայացուցիչ՝ պարոն Ա. Դուկասյանը:

Օրակարգում՝

1. Համայնքի ղեկավարի 2016թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ձեկուցող՝ /Ռ. Խաչատրյան/

2. Զննարկումներ.

Ժողովը բացեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Դարիբյանը, ով ներկաներին ծանոթացրեց օրակարգին և նշեց, որ բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը, որը հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալու բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականներ կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ և խնդրեց ելույթից հետո կարծիքներ արտահայտել, համայնքի ղեկավարի 2016թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ և գնահատել աշխատանքը:

Այնուհետև ձայնը տրվեց՝ համայնքի ղեկավար՝ պարոն Ռ. Խաչատրյանին:

Ողջունելով ներկաներին պարոն Ռ. Խաչատրյանը իր ելույթը սկսեց հետևյալ տողերով՝ Հարգելի պարոն՝ Ա. Դուկասյան և ներկաներ.

Իմ ելույթով կփորձեմ ըստ ոլորտների ամբողջական պատկերով ներկայացնել՝ համայնքի բյուջեի կատարման աշխատանքները, եկամուտների և ծախսերի վերաբերյալ.

Իրականացնելով օրենքով սահմանված կարգով, համայնքի ղեկավարի իրավասությունները, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով հաշվետու ժամանակաշրջանում, իմ կողմից իրավիրվել և վարվել է ավագանու 10 նիստ, որից 5 հերթական և 5 արտահերթ, որտեղ ըննարկվել են համայնքին վերաբերվող կարևորագույն հարցեր: 2016թվականի սեպտեմբերի 18-ի ընտրություններից հետո, նորընտիր ավագանու հետ գումարվել է՝ երկու ավագանու նիստ.

Հաստատվել է՝ ավագանու նիստերի ժամանակացույցը, ամենամյա գույքագրման փաստաթղթերը, համայնքում աղբահանություն իրականացնելու պայմանագիրը և սան. մաքրման սխեման:

Եռամսյակը մեկ անգամ հաղորդում են ներկայացրել՝ բյուջեի կատարման մասին, ավագանու անդամներին և համայնքի բնակիչներին:

Այժմ կնշեմ կատարված աշխատանքները՝ ըստ ոլորտների.

Մրգաստան համայնքի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 9 աշխատողներից, որից 6-ը հանրային ծառայողներ են, 2-ը զբաղեցնում են հայեցողական պաշտոն, 1-ը իրականացնում է տեխնիկական սպասարկում:

Համայնքապետարանի ենթակայության տակ գտնվում է «Մշակույթի տունը», որի աշխատակազմը բաղկացած է՝ 5 աշխատողներից, որից մեկը հայեցողական պաշտոն է, մեկը քաղաքացիական աշխատող /գրադարանավար/, երկուսը տեխնիկական սպասարկման աշխատողներ են, մեկ հաստիքը՝ թափուր է:

Համայնքի 2016թվականի դրտացիան կազմել է՝ 24 652.0 դրամ:

Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 296.6հա., որից 205.13հա. վարելահող, այգիները կազմում են՝ 5.44 հա.:

Համայնքը՝ ունի մեկ միջնակարգ դպրոց.

Գյուղացիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը և անասնապահությունն է:

2016թ. դեկտեմբերի 18-ի, թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշմամբ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 16-ի առաջին մասի 3-րդ կետի, և 54-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների ընդունվել և հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2017թ. բյուջեն:

Բյուջեն կազմված է վարչական և ֆոնդային մասերից.

Նախատեսված է՝

Եկամուտների գծով՝ 31 312.2 հազար դրամ:

Ծախսերի գծով՝ 31 312.2 հազար դրամ:

Դեֆիցիտը կազմել է՝ 0.0 հազար դրամ:

Ավագանու կողմից հաստատվել է՝

1.«Տեղական տուրքերի և վճարների» դրույքաչափերը 2017թվականի համար

2.2017թվականի հաստիքացուցակը և պաշտոննային դրույքաչափերը

3.համայնքի ղեկավարի վարձատրության չափը

4.համայնքում իրականացվող աղբահանության պայմանագիրը և սան. մաքրման սխեման

5.«Մշակույթի տան» վարիչի թեկնածությունը

2016թվականի սեպտեմբերի 18-ին կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների հետ կապված, համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել է՝ համայնքի զարգացման հնգամյա 2017-2021թ.թ. ծրագրի նախագիծը.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով, հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից իրականացրել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է բյուջեի 3 փոփոխություն և 5 վերաբաշխում բյուջեում, ընդունված որոշումները սահմանված կարգով ուղարկվել է Հ.Հ. Արդարադատության նախարարություն փորձաքննության և առաքվել է մարզպետարան համապատասխան ժամկետներում:

Իմ հանձնարարությամբ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է աշխատակազմի անխափան աշխատանքը՝ Մասնավորապես՝ նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը.Նիստում քննարկվող հարցերի նախագծերը, մեկ շաբաթ առաջ իրագեկվել է ավագանուն:

Նշված հարցերի օրակարգը և նրանում քննարկված հարցերը փակցված են եղել հայտարարությունների համար նախատեսված տեղերում, համայնքի բնակիչներին իրազեկելու նպատակով:Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից նախապատրաստվել է և ժամանակին առաքվել է մարզպետարան ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները՝ թղթային տարբերակով:

Ժամանակին տրվել է պատասխան մարզպետարանից և այլ կազմակերպություններից եկած գրություններին:

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող առաջին շաբաթվա ընթացքում, ներկայացրել է իր կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Կազմակերպվել է ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի, համայնքի ավագանու, ինչպես նաև համայնքին կցված համայնքային ոստիկանի մոտ:

Ընդունելության դիմած՝ 37 քաղաքացիներից 27-ի դիմումներին տրվել է սպառիչ պատասխան:Հիմնականում բնակչության դիմումները սոցիալական բնույթի են:

Համայնքի բնակչությանը տարվա ընթացքում տրվել է՝ 2600.0 /երկու միլիոն վեց հարյուր հազար/ դրամի դրամական օգնություն:

Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:

Հողի հարկը տարվա կտրվածքով կազմում է՝ 4100.0 /չորս միլիոն հարյուր հազար/

1.1 Համայնքի...
պատճեններ, տրվել են նաև տեղեկանքներ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներին համար:

2.Ֆինանսների բնագավառում իրականացրել են հետևյալ պարտադիր լիազորությունները.

2.1 Համայնքի ավագանու հաստատմանն են ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները:

2.2 Ին կողմից ստորագրվել է ֆինանսական փաստաթղթերը:

2.3 Հարկերը և օրենքով սահմանված վճարումները չկատարած անձանց նկատմամբ կիրառվել է նախազուշացում՝ ծանուցման եղանակով.

3. Հասարակական կարգի պահպանության բնագավառում, ին կողմից իրականացվել է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

3.1 Համայնքին կցված ոստիկանի կողմից, շաբաթը մեկ անգամ ստացվել է տեղեկատվություն՝ համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ: Կիրառվել է՝ բանավոր նախազուշացում:

4. Պաշտպանության բնագավառում ին կողմից իրականացվել է հետևյալ կամավոր լիազորությունները.

4.1 Աջակցել են զորակոչին, զորահավաքների: Միջոցներ են ձեռնարկել՝ զին. ծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ: Մասնավորապես՝ համայնքում ունենք զոհված ազատամարտիկի մայր, որի նկատմամբ մեր կողմից ցուցաբերվում է ամենօրյա ուշադրություն:

4.2 Աշխատանքներ են տարվում նաև երիտասարդության շրջանում, ռազմահայրենասիրական դաստիարակության վերաբերյալ:

5 Ամենկատ չեն մնացել ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցություն ցուցաբերած կամավորների ընտանիքները, ինչպես նաև Արցախից համայնք եկած փախստականների ընտանիքները: Հատկացվել է ինչպես դրամական, այնպես էլ բնամթերքի ձևով: Ընդհանուր առմամբ ծախսվել է՝ 370.0 /երեք հարյուր յոթանասուն հազար /դրամ:

6. Բանակ զորակոչված յուրաքանչյուր զինվորի ընտանիքին ցուցաբերվում է դրամական աջակցություն, զինվորական երդմանը՝ ծնողների մասնակցությունը ապահովելու համար:

5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 5.1 Սահմանված դեպքերում համայնքի բնակչությունը իրագեկվել է քաղաքաշինական նորմերի փոփոխությունների մասին.
- 5.2 Իրականացվել է հսկողություն համայնքի սեփականություն համարվող շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ.
- 5.3 Կազմվել է համայնքի 2015թվականի գույքագրման փաստաթղթերը, որը ներկայացվել է ավագանու հաստատմանը: 2016թվականի գույքագրման փաստաթղթերը՝ կներկայացվի ավագանու հաստատմանը՝ 2017թվականի առաջիկա նիստում:
- 5.4 Կազմակերպվել է համայնքի որոշակի տարածքների բարեկարգում և կանաչապատում:
- 5.5 Բնականոն ձևով կազմակերպվում է նաև աղբահանությունը:
- 5.6 Ավագանու որոշմամբ կանոնակարգվել է գերեզմանատների գործունեությունը:
- 5.7 Իմ կողմից մեծ ուշադրություն է դարձվում համայնքի հուշարձանի և հարակից տարածքի պահպանման աշխատանքներին:
- 5.8 Կադաստրի մարմիններում կազմակերպվել ենք՝ բնակիչների սեփականության իրավունքի գրանցում և անշարժ գույքի համար սեփականության իրավունքը հաստատող վկայականի ստացում:

6. Գողօգտագործման բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 6.1 Սահմանված կարգով իրականացվել է հողամասերի ընթացիկ հաշվառումը, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը, որը ներկայացվել է ավագանու հաստատմանը:
- 6.1 Դամայնքի արտադրական այլ հողերից 0.08 հա-ի վերաբերյալ կատարվել է հողի նպատակային նշանակության փոփոխություն և արդեն ստացվել է հանձնաժողովի դրական եզրակացությունը, որն էլ հաստատվել է ավագանու նիստում, աշխատանքները ընթացքի մեջ են: Չեռք է բերվել հողակտորի առանձնացված սեփականության վկայականը, որը հետագայում կնվիրաբերվի Այդինյանների ընտանիքին: Կան ֆինանսական դժվարություններ, որի պատճառով աշխատանքները հետաձգվում են:

7. Առևտրի և ծառայությունների բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 7.1 Իմ կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը տարվա ընթացքում կիսամյակը մեկ անգամ հսկողություն է իրականացնում առևտրի կետերում:
- 7.2 Իմ կողմից տրվում է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն՝ Գ. Գ. կառավարության սահմանած կարգով:

8. Մշակույթի, կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 8.1 Իմ հանձնարարությամբ՝ «Մշակույթի տունը» իրականացրել է Գ. Գ. տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառում, մասնավորապես՝ «Մարտի 8-ին» նվիրված, ընդհանուր ծախսը կազմել է՝ 500.0 /հինգ հարյուր հազար/ դրամ:
«Մարտի 8-ի» կապակցությամբ համայնքի տարեց կանանց, նվիրվել է արժեքավոր նվերներ:
- 8.2 Աջակցել են՝ միջնակարգ դպրոցի գործունեությանը: Մեր մասնակցությունն ենք բերել՝ «Վերջին զանգի», «Գիտելիքի օրվան» նվիրված միջոցառումներին, ինչպես նաև նշվել է համայնքում 0-10 տարեկան երեխաների ամանորը:
- 8.3 Դամայնքում 5 երեխա ունեցող երիտասարդ ընտանիքներին, 5-րդ երեխայի ծնվելու կապակցությամբ նվիրվել է՝ 150.0 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ արժողությամբ նվեր:

9. Իմ կողմից գյուղատնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

- 9.1 Կազմակերպել եմ համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության միջոցառումներ, ագրարային կանոնների պահպանման աշխատանքներ:
- 9.2 Աջակցել եմ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:
- 9.3 Գյուղացիներին տրամադրվել է ազոտական պարարտանյութ և սերմնացու:
- 9.4 Իմ կողմից կազմվել է հանձնաժողով և կատարվել է անասնազվաքանակի հաշվառում համայնքում.
- 9.5 2016թ. հուլիսի 10-ին հանրապետությունում տեղացած կարկուտը տնտեսություններին հասցրած վնասը հաշվարկելու համար իմ կողմից ստեղծվել է հանձնաժողով, որը ուսումնասիրել և հաշվառել է տնտեսություններին հասցված վնասի չափը. Ամփոփ տվյալները համապատասխան ձևաչափով ներկայացվել Արմավիրի մարզպետարանի գյուղ-վարչություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵՇԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- 1. Համայնքի աշխարհագրական դիրք.
- 2. Պահուստային հողերի ակադություն, որոնք շահագործվում են ամբողջությամբ:
- 3. Վերանորոգված միջնակարգ դպրոց:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ա/Կոմունալ տնտեսության ինժեներական ցանցերի, ճանապարհային ցանցերի անմխիթար վիճակը, որոնք վերանորոգման կարիք են գգում:

բ/«Մշակույթի տան» շենքի վթարային վիճակը:

գ/Ոռոգման ջրի մատակարարման անկազմակերպ բնույթը:

դ/գործազուրկների մեծ քանակը:

ե/Մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները:

զ/Շատ են անտունները, որոնք ունեն բնակարանային ապահովման կարիք:

է/Համայնքը չունի մանկապարտեզ, գյուղապետարանի շենք, ինչպես նաև մշակույթային օջախներ, խաղահրապարակ:

ե/Դպրոցը չունի սպորտի դահլիճ:

Ես այս ամենը ներառել եմ՝ իմ հնգամյա 2017-2021թ.թ համայնքի զարգացման ծրագրում, ներառելով համայնքում իրականացվող աշխատանքների առաջնահերթությունը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատվել է՝ 2016թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2 նիստի, թիվ 10-Ն որոշմամբ և ներկայացվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:

Եզրափակելով ելույթս նշեմ, որ համայնքում առկա խնդիրները շատ են, իմ նպատակն է ամել հնարավորինս ավելին:

Օրակարգի՝ 2-րդ հարցով ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքում առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի վերանորոգումը, ինչպես նաև սպորտ դպրոցի կիսակառույց շենքի վերանորոգման աշխատանքներն են:

Ներկաները համայնքի ղեկավարի կատարած աշխատանքը՝ տվյալ ժամանակահատվածի համար գնահատեցին բավարար:

Ու խաչատրյանը ավելացրեց, որ իր ցանկությունն է լուծում տալ առաջնահերթ խնդիրներին, սակայն բյուջեն թույլ չի տալիս կատարել մնաց մեծածավալ աշխատանքներ, և որ ակնկալում է համայնքի բնակիչների աջակցությունը համայնքում իրականացվող աշխատանքներին:

Օրակարգի հարցերը սպառվել են:

ՍՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

